# «Այն ոլորտների ցանկը սահմանելու մասին, որոնցում գործունեություն իրականացնող հարկ վճարողների կողմից հիմնական միջոցների տեղափոխության դեպքում ուղեկցող փաստաթղթերի առկայությունը պարտադիր չէ» ՀՀ կառավարության որոշման նախագիծ

**ԱՅՆ ՈԼՈՐՏՆԵՐԻ ՑԱՆԿԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ, ՈՐՈՆՑՈՒՄ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՀԱՐԿ ՎՃԱՐՈՂՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՏԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ԴԵՊՔՈՒՄ ՈՒՂԵԿՑՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԱՌԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ ՊԱՐՏԱԴԻՐ ՉԷ**

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 57-րդ հոդվածի 1-ին մասը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ***որոշում է.***

1. Սահմանել այն ոլորտների ցանկը, որոնցում գործունեություն իրականացնող հարկ վճարողների կողմից հիմնական միջոցների տեղափոխության դեպքում ուղեկցող փաստաթղթերի առկայությունը պարտադիր չէ՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից, և դրա գործողությունը տարածվում է 2018 թվականի հունվարի 1-ից հետո ծագած հարաբերությունների վրա:

Հայաստանի Հանրապետության
վարչապետ

**Ն. Փաշինյան**

**Հավելված**

**ՀՀ կառավարության ... որոշման**

**Ց Ա Ն Կ**

**ԱՅՆ ՈԼՈՐՏՆԵՐԻ, ՈՐՈՆՑՈՒՄ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՀԱՐԿ ՎՃԱՐՈՂՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՏԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ԴԵՊՔՈՒՄ ՈՒՂԵԿՑՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԱՌԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ ՊԱՐՏԱԴԻՐ ՉԷ**

1. Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 57-րդ հոդվածի 1-ին մասի կիրառության առումով հարկ վճարողների կողմից հիմնական միջոցների տեղափոխության դեպքում ուղեկցող փաստաթղթերի առկայությունը պարտադիր չէ Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի 2013 թվականի սեպտեմբերի 19-ի N 874-Ն հրամանով հաստատված՝ տնտեսական գործունեության տեսակների դասակարգչով (այսուհետ՝ դասակարգիչ) սահմանված՝ «F(ԷՖ) Շինարարություն» ոլորտի բացառապես հետևյալ գործունեության տեսակների շրջանակներում հիմնական միջոցների տեղափոխության համար՝

1) Բնակելի և ոչ բնակելի շենքերի շինարարություն (դասակարգչի 41.20 դաս).

2) Ճանապարհների և ավտոմայրուղիների շինարարություն (դասակարգչի 42.11 դաս).

3) Երկաթուղիների և մետրոյի շինարարություն (դասակարգչի 42.12 դաս).

4) Կամուրջների և թունելների շինարարություն (դասակարգչի 42.13 դաս).

5) Ջրային տնտեսության կառույցների շինարարություն (դասակարգչի 42.21 դաս).

6) Էլեկտրահաղորդման և հեռահաղորդակցական համակարգերի շինարարություն (դասակարգչի 42.22 դաս).

7) Սպորտային կառույցների շինարարություն (դասակարգչի 42.99.1 դաս).

8) Գազամատակարարման կառույցների շինարարություն (դասակարգչի 42.99.2 ենթադաս):